

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԻ ՏԱՐԱԾՄԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հայկական ՍՍՌ
ԳԱ Իսկական անդամ
Վ. Հ. ԳՈՒՎՔԱՆՅԱՆ

ԱԳՐՈՔԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԳԱ ԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ

Երևանում կարդացած հրատարակչին
դասախոսության սղագրությունը

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՔՈՒԹՅՈՒՆ

ԵՐՎԱՆ

1949

631.59 (47.925) 14643

F-86 19. nie f. u. z. u. 4. 4.

Wapnoffhng p. u. u. u. u.

u. u. u. u. u. u. u. u.

18/

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԳԻՏՆԵԼԻՔՆԵՐԻ
ՏԱՐԱԾՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

631.52(47.025)

Գ-86

Հայկական ՍՍՌ
ԳԱ իսկական անդամ
Վ. Լ. ԳՈՒԼՔԱՆՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱՄ Է 1951 թ.

ԱԳՐՈՒԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ

Երևանում կարդացած հրապարակային
դասախոսությունների

~~11-643~~

A 17929

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳՍ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1949



Действительный член
АН Армянской ССР
В. О. ГУЛКАНЯН

УСПЕХИ АГРОБИОЛОГИЧЕСКОЙ
НАУКИ В АРМЯНСКОЙ ССР

(На армянском языке)

Издание Общества по распространению политических
и научных знаний Армянской ССР

Ереван, 1949 г.

Բնության մեծ վերափոխիչ Ի. Վ. Միշուրինը հետևողական պայքար էր տանում մետաֆիզիկների դեմ, որոնք համառ կերպով շեղում էին գիտությունը զարգացման ճիշտ շանապարհից: Այդ պայքարը նույնքան հետևողականությամբ տանում է ակադեմիկոս Տ. Գ. Լիսենկոն: Շարունակելով Սեչենովի, Մեչնիկովի, Տիմիրյազևի, Պավլովի և ուրա մյուս մեծ գիտնականների լավագույն տրադիցիաները, Ի. Վ. Միշուրինն ամեն կերպ աշխատում էր գիտությունը դարձնել ժողովրդի սեփականություն և ոչ միայն սեփականություն, այլև զենք նրա ձեռքում: Գիտության այդպիսի ժողովրդականության համար է պայքարում, իր բազմաթիվ աշակերտների հետ միասին, ակադեմիկոս Տ. Գ. Լիսենկոն: Զարգացնելով Զարլզ Դարվինի ուսմունքի մատերիալիստական առողջ կորիզը, Ի. Վ. Միշուրինը և Տ. Գ. Լիսենկոն դարվինիզմը բարձրացրին նոր, բարձր աստիճանի: Նրանք ստեղծեցին միշուրինյան բիոլոգիա, որի համաձայն կենդանի օրգանիզմի բնույթը դաստիարակման միջոցով կարելի է փոփոխության ենթարկել՝ համաձայն մարդու կարիքների և ցանկությունների: Առաջ տանելով միշուրինյան բիոլոգիայի զարգացման գործը, ակադեմիկոս Տ. Գ. Լիսենկոն ներդաշնակորեն միացրեց այդ ուսմունքը Կոստիչևի—Դոկուչևևի—Վիլյամսի ուսմունքի հետ, այսպիսով ստեղծելով ագրոբիոլոգիական ուսմունք, որն ընդունակ է վճռելու սոցիալիստական գյուղատնտեսության կողմից առաջ քաշված խրնդիրները:

Միշուրինյան բիոլոգիան՝ ագրոբիոլոգիան, փայլուն հաղթանակ տարավ վայսամանիզմի, մենդելիզմի, մորգանիզմի դեմ: Բուլշևիկյան պարտիան, մեր ժամանակի մեծագույն հանձար Է. Վ. Ստալինի ղեկավարությամբ օգնեց միշուրինյան բիոլոգիային այդ հաղթանակում:

Վ. Ի. Լենինի անվան Համամիութենական Գյուղատնտեսական

Գիտությունների Ակադեմիայի սեփան հանրագումարի բերեց քիմիոգիայի մեջ տեղի ունեցող երկարատև պայքարը և նշանավորեց դիալեկտիկական մատերիալիզմից ելնող, Միչուրինի, Լիսենկոյի ուսմունքի լրիվ հաղթանակը Վեյսմանի—Մենդելի—Մորգանի ռեակցիոն իդեալիստական ուսմունքի հանդեպ: Այդ սեփան ընդհանուր հետաքրքրություն առաջացրեց նաև Հայկական ՍՍՌ-ում, որտեղ նույնպես համառ պայքար էր գնում միչուրինյան քիմիոգիայի և ռեակցիոն վեյսմանիզմի—մորգանիզմի միջև: 1948 թ. օգոստոսի վերջերին Հայկական ՍՍՌ-ում կայացավ Գիտությունների Ակադեմիայի Բիոլոգիական և Գյուղատնտեսական Բաժանմունքների միացյալ սեփան, որը քննարկեց Վ. Ի. Լենինի անվան Համամիութենական Գյուղատնտեսական Գիտությունների Ակադեմիայի սեփայի արդյունքները և քիմիոգիական գիտության գրությունն ու խնդիրները Հայկական ՍՍՌ-ում:

Դեռ նախ քան այդ սեփան միչուրինականները—լիսենկոյականները Հայկական ՍՍՌ-ում լայն պրոպագանդա էին մղում Ի. Վ. Միչուրինի և Տ. Գ. Լիսենկոյի ուսմունքի համար: Այդ պրոպագանդան նրանք տանում էին իրենց բանավոր և տպագիր ելույթներում: Հատկապես մեծ ուշադրություն էր նվիրվում միչուրինյան ուսմունքի պրոպագանդային Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Բույսերի Գենետիկայի Ինստիտուտի փորձերի ցուցադրման միջոցով: Այդ փորձերը տեսել են և դրանցով ոգևորվել բազմաթիվ քիմիոզներ, գյուղատնտեսներ և կոլխոզնիկներ: Ինստիտուտում կազմակերպված են եղել դասընթացներ, որոնք պատրաստել են բազմաթիվ փորձադատ կոլխոզնիկներ: Միչուրինական գիտնականների շատ փորձեր տարվել են կոլխոզային դաշտերում, հենց իրենց կոլխոզնիկների լայն մասնակցությամբ: Միչուրինյան քիմիոգիական գիտության զարգացման, Ի. Վ. Միչուրինի և ակադեմիկոս Տ. Գ. Լիսենկոյի ուսմունքի զարգացման համար Հայկական ՍՍՌ-ում շափազանց շատ քան է արված իրեն՝ Ի. Վ. Միչուրինի և, հատկապես Տ. Գ. Լիսենկոյի կողմից: Նրանք մեծազույն հոգատարությամբ աճեցրել են կադրեր, որոնցից շատերն աշխատում են մեզ մոտ: Ակադեմիկոս Տ. Գ. Լիսենկոն մըշտապես հետևել է և հետևում է իր աշակերտների հաջողություններին: 1940 թվին նա եղել է Հայկական ՍՍՌ-ում, որտեղ անձամբ ստուգել է իր աշակերտների փորձնական աշխատանքները:

Իսկ հետագայում մշտապես կենդանի կապ է պահել նրանց հետ, ամեն կերպ ձգտելով զարգացնել ագրոբիոլոգիական գիտությունը»

Վ. Ի. Լենինի անվան Համամիութենական Գյուղատնտեսական Գիտությունների Ակադեմիայի հուլիս-օգոստոսյան սեսիայից հետո և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Բիոլոգիական և Գյուղատնտեսական Բաժանմունքների միացյալ սեսիայից հետո, Սովետական Հայաստանի միջուրինականները տասնապատկված ուժով լծվեցին ագրոբիոլոգիական գիտության հետագա պրոպագանդայի և զարգացման գործին: Նրանք վճռականորեն լծվեցին մեր երկրի բնության վերափոխման Ստալինյան 15-ամյա վիթխարի պլանի իրագործման մեծ գործին, մի այլանի, որ վերջնականապես և անվերադարձորեն կազատի մեր երկիրը երաշտի վտանգից, ստեղծելով բոլոր պայմանները մշտապես բարձր բերք ստանալու համար: Աշխատելով այդ ուղղությամբ, Հայկական ՍՍՌ-ի միջուրինականները—լիսենկոյականները ջանք են թափել և ջանք կթափեն այն հարցերի լուծման ուղղությամբ, որոնք ունեն կարևոր նշանակություն գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և անասունների մթերատվության բարձրացման համար: Միաժամանակ նրանք հիշում են և կհիշեն, որ այս բոլոր հարցերը Դոկուչակի—Կոստիչևի—Վիլյամսի փերրագործության խոտադաշտային սիստեմի պայմաններում դրվում են նոր ձևով:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Բույսերի Գենետիկայի Ինստիտուտում, այդ Ակադեմիայի իսկական անդամ Գ. Հ. Բաբաջանյանն իր աշխատակիցների հետ միասին լայն փորձեր է դրել գյուղատնտեսական կուլտուրաների բեղմնավորման ընտրողականության վերաբերյալ: Այդ փորձերի, ինչպես և այլ գիտնականների ուսումնասիրությունների աբդուկունքներն ընդհանրացրել է Գ. Հ. Բաբաջանյանն իր «Գյուղատնտեսական կուլտուրաների բեղմնավորման ընտրողական ընդունակությունը» աշխատության մեջ:

Այդ աշխատության մեջ առաջին անգամ շարադրված և հիմնավորված է բույսերի սեռական մենտորի գաղափարը, նրանց հիբրիդացման ժամանակ: Ի. Վ. Միջուրինի և Տ. Գ. Լիսենկոյի ուսմունքի հիման վրա փորձնական կերպով ապացուցվել է սեռական մենտորի առկայությունը բեղմնավորման ժամանակ, որն ու-

նի կարևոր նշանակութիւն սեւեկցիայի գործում: Այս հետազոտութիւնները ցույց են տալիս, որ ժառանգականութեան ձևավորման այնպիսի պրոցեսները, որպիսիները դիտուում են մենտորներին կիրառման դեպքում, որոնք հանդիսանում են վեգետատիվ բջիջների փոխազարձ ազդեցութեան հետևանք, տեղի ունեննաւ բեղմնավորման ժամանակ սեռական բջիջների փոխազարձ ազդեցութեան հետևանքով բույսերի մոտ՝ խառը փոշու դեպքում, իսկ կենդանիների մոտ՝ կրկնակի զուգավորման դեպքում: Այդ պատճառով հնարավոր է դառնում խոսել ոչ միայն վեգետատիվ մենտորի, այլև սեռական մենտորի մասին: Սահմանված է, որ սեռական մենտորի երևույթների օգտագործման դեպքում օրգանիզմների մի շարք ժառանգական հատկութիւնների նպատակադիր փոփոխման հետ միասին կարելի է թուլացնել կամ բուլդովին վերացնել դեպրեսիան, որը տեղի է ունենում բույսերի և կենդանիների մոտիկ արյունակցական բաղմնացման ժամանակ (ինցուլատ և ինբրիդինգ):

Սեռական մենտորի հարցը, անկասկած, կմշակվի հետագայում և մեծ օգուտ կբերի սեւեկցիայի գործի համար: Քնկեր Բաբաջանյանի աշխատութիւնը, — ասում է ակադեմիկոս Տ. Գ. Լիսենկոն, — մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում ինչպես բեղմնավորման հարցերի հետագա տեսական մշակման, այնպես էլ սեւեկցիայի գործի մեջ անմիջականորեն օգտագործելու համար:

Ի. Վ. Միշուրինը նպատակ էր դրել վերափոխել բույսերի բնույթը մարդու կարիքների և ցանկութիւնների համաձայն: Այդ նպատակի իրագործման համար նա մշակել է մի շարք հիմնալի կղանակներ և մեթոդներ: Ակադեմիկոս Տ. Գ. Լիսենկոն ձգտելով այդ նույն նպատակին, սահմանել է բույսերի ստադիականութեան զարգացման տեսութիւնը, լուսավորելով բուսական օրգանիզմների բնույթի դեկավարման ճանապարհները: Դրա հիման վրա Բույսերի Գենետիկայի Ինստիտուտի աշխատակից, Բիոլոգիական գիտութիւնների թեկնածու Ս. Հ. Պոլոսյանն սկսել և այժմ ուժեղ կերպով շարունակում է խազոյի վաղի ուսումնասիրութիւնները:

Ի. Վ. Միշուրինը, քննելով վայրակի ազդեցութեան հարցը — պատվաստացուի ազդեցութիւնը պատվաստակալի ձևավորվող սերմերի վրա, գրում է՝ «... ըստ էութեան մենք կստանանք վայ-

քակաչին պատվաստացուի վեզետատիվ հիբրիդներ, կուլտուրական սորտերի հատկութունների փոքր խառնուրդով»:

Ակադեմիկոս Տ. Գ. Լիսենկոն, զարգացնելով Ի. Վ. Միշուրինի այս դրույթը, ասում է՝ «Մի՞թե խաղողագործ սելեկցիոներները եզրակացություն չպետք է հանեն այն մասին, թե մինչև խաչաձևելը անհրաժեշտ է ստանալ սեփականարմատ վազ»:

Ի. Վ. Միշուրինի և Տ. Գ. Լիսենկոյի դրույթների հիման վրա կատարած աշխատանքները հետաքրքիր արդյունքների բերեցին, որոնք ցույց են տալիս, որ խաղողի գենետիկական-սելեկցիոն աշխատանքի ժամանակ բացառապես արդյունավետ է աշխատանքի միշուրինյան մեթոդը, երբ վերցվում է սեփականարմատ վազը, կատարվում է հիբրիդացում, իրագործվում է հիբրիդների նպատակադիր դաստիարակություն՝ համապատասխան արտաքին պայմանների մեջ, երբ կատարվում է պատվաստ՝ երիտասարդ քուսակի զարգացման նպատակով և այլն: Այդ ճանապարհով ստացված են խաղողի գծեր, որոնք ունեն մեծ նշանակություն այդ կուլտուրայի սելեկցիայի համար: Սրա հետ մեկտեղ պարզված են մի շարք հարցեր, որոնք նոր ձևով են լուսաբանվում խաղողի վազի բնույթը և հնարավորություն են տալիս ավելի հաջող կերպով դեկավարելու խաղողի վազի ժառանգականության ձևավորումը:

Ի. Վ. Միշուրինի մշակած վեզետատիվ հիբրիդացման մեթոդը լայնորեն օգտագործվել է Հայկական ՍՍՄ Գիտությունների Ակադեմիայի Բույսերի Գենետիկայի և սելեկցիայի Ինստիտուտում: Բիոլոգիական գիտությունների թեկնածու Հ. Գ. Բատիկյանը՝ նպատակ է դրել՝ ստանալ նոր տվյալներ սեռական և վեզետատիվ հիբրիդացման միջև ըստ էության տարբերություն շինելու վերաբերյալ: Կատարված բազմաթիվ խաչաձևումները տոմատի, բադրիջանի, տաքգեղի, լոբու և այլ կուլտուրաների տարբեր սորտերի միջև տվել են շափից դուրս հարուստ նյութ:

Այս հետազոտությունների հեղինակ Հ. Գ. Բատիկյանը բույսերը խաչաձևել է ինչպես սեռական, այնպես էլ վեզետատիվ ճանապարհով: Այս խաչաձևումներից ստացված սերմերը նա ցանկել է նույն պայմանների մեջ: Պարզվել է, որ ստացված սեռական և վեզետատիվ հիբրիդները ճեղքավորվում են, ըստ որում վեզետատիվ հիբրիդները երկրորդ սերնդում տալիս են ավելի հարուստ քաղմապիսություն: Այս հետազոտություններով մի անգամ ևս հաս-

տատվեցին ակադեմիկոս Տ. Գ. Լիսենկոյի խոսքերն այն մասին, որ՝ «վեգետատիվ հիբրիդները հանդիսանում են համոզիչ ապացույց ժառանգականության միջուրինյան հասկացողության ճշտության մասին: Միևնույն ժամանակ նրանք հանդիսանում են անանցանելի խոչընդոտ մենդելիստների-մորգանիսանների տեսության համար»:

Վեգետատիվ հիբրիդացումը հնարավորություն է տալիս ստանալ բույսերի արժեքավոր սորտեր: Հ. Գ. Բատիկյանն արդեն առանձնացրել է տաքդեղի և բադրիչանի գծեր, որոնք հետաքրքրություն են ներկայացնում պահածոների արտադրության համար: Այն հանգամանքը, որ վեգետատիվ հիբրիդացումը բազմապիսի ճեղքավորում է տալիս, լայն հնարավորություն է ստեղծում սելեկցիոն աշխատանքի համար:

Ի. Վ. Միշուրինի և Տ. Գ. Լիսենկոյի հետազոտություններում բույսերի բնույթի նպատակադիր փոփոխման հարցը, սեռական և վեգետատիվ հիբրիդացման և դաստիարակման ճանապարհով, գրավել է կենտրոնական տեղ: Ակադեմիկոս Տ. Գ. Լիսենկոն ուսումնասիրելով բուսական օրգանիզմների բնույթը, սահմանեց բույսերի ստադիական զարգացման հզոր տեսությունը: Իր հետազոտությունները նա իրագործում էր. բույսերը ցանելով տարվա բոլոր եղանակներին: Ընդորում, ձգտելով գիտավոր նպատակին՝ բույսերի զարգացման ստադիականության պարզաբանմանը, նա չէր տարվում այլ երևույթներով, օրինակ, ձևագոյացումներով, որը նկատվում է բույսերը անսովոր ժամկետներում ցանելու ժամանակ:

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Մ. Գ. Թումանյանն օգտագործել է բույսերի ցանքը նրանց համար խիստ անսովոր ժամկետներում, ձևագոյացման պրոցեսներ առաջացնելու և այդ պրոցեսները ղեկավարելու նպատակով: Նա մոտենում է դրան որպես մի միջոցի, որը հնարավորություն է տալիս բույսերի որոշ ալլատեսակներ ձևափոխել այլ ալլատեսակների և նույնիսկ տեսակներն՝ այլ տեսակների: Այդ հիման վրա Մ. Գ. Թումանյանը հարց է դնում գյուղատնտեսական կուլտուրաների նոր սորտեր ստանալու մասին այն հարուստ բազմատեսակ մատերիալի սելեկցիայի միջոցով, որն ստացվում է ցանքի այլ եղանակի կիրառման դեպքում: Սրա հետ մեկտեղ նա խնդր է

դնում անսովոր ժամկետներում կատարվող ցանքերի ազրոտեխնիկայի մշակման վերաբերյալ:

Ուսումնասիրելով ցորենների ձևագոյացման պրոցեսները, Մ. Գ. Թումանյանը ստացել է, օրինակ, կարծր ցորեն՝ պերսիկում ցորենից: Մի այլ դեպքում պոլոնիկում ցորենից նա ստացել է ցորենի նոր տեսակ, որը կոչել է Սևանիկում:

Այս եղանակով ստացված ցորենի բազմազան ձևերից ընտրված են ամենաարժեքավոր գծերը, որոնք այժմ մշակվում են և դաստիարակվում բարձր ազրոտեխնիկական ֆոնի վրա: Կասկած չկա, որ հմուտ սելեկցիոն աշխատանքի հիման վրա այս գծերից կստացվեն արժեքավոր սորտեր:

Այդպիսի արդյունքներ են ստացված նաև եգիպտացորենի վերաբերյալ: Ատամնաձև եգիպտացորենից ստացված է կարծր ձև: Ընտրության եղանակով առանձնացված է նոր արժեքավոր գիծ, որը, փորձարկվում է մի շարք կոլտոզներում: Յանքի այդ նույն եղանակի կիրառման ճանապարհով գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ա. Կ. Մինասյանը զարու երկշարք ձևերից ստացել է բազմաշարք ձևեր, ինչպես և նրկշարք ձևեր՝ բազմաշարքներից:

Այս բոլորի հիման վրա կարելի է գալ այն եզրակացության, որ գյուղատնտեսական բույսերի ցանքերը խիստ անսովոր ժամկետներում կարող են և պետք է լայն կերպով օգտագործվեն սելեկցիայի գործում:

Այստեղ պետք է նշվեն կարտոֆիլի ամառային ցանքի վերաբերյալ աշխատանքները, որոնք կատարվել են ակադեմիկոս Տ. Գ. Լիսենկոյի առաջարկած մեթոդով: Հայկական ՍՍՌ տերիտորիան բաժանվում է երեք հիմնական գոտիների— ցածրադիր, նախալեռնային և լեռնային, որոնցից ամեն մեկն իր հերթին ունի պայմանների շատ մեծ բազմազանություն: Այս գոտիներից միայն լեռնայինում և նախալեռնայինի մի մասում է հնարավոր կարտոֆիլ մշակել: Հայկական ՍՍՌ մնացյալ շրջաններում այդ կուլտուրան կարող է մշակվել միայն ամեն տարի լեռնային շրջաններից սերմացու բերելու դեպքում: Այդ պատճառով կարտոֆիլի ամառային ցանքի հարցը Հայկական ՍՍՌ-ում դրված է եղել շատ սուր:

Հայկական ՍՍՌ-ում կարտոֆիլի ամառային ցանքի փորձերը հին պալարներով առաջին անգամ կատարվել են 1938 թվին, բիո-

լոգիական գիտությունների թեկնածու Գ. Գ. Թումանյանի կողմից: Այդ փորձերի հիման վրա պարզվել է, որ կարտոֆիլի ցանքի ժամկետն Արարատյան դաշտավայրի համար հանդիսանում է հուլիսի վերջը և օգոստոսի սկիզբը:

Հին պալարներով կարտոֆիլի ամառային ցանքն Արարատյան դաշտավայրում տվեց հիանալի արդյունքներ՝ բերքի չափի և պալարների որակի ու մեծության տեսակետից: Սակայն պարզվեց, որ հին պալարների պահպանումը մինչև ցանքի ժամկետը, այսինքն մինչև հուլիսի վերջը և օգոստոսի սկիզբը, հանդիսանում է համարյա թե անհաղթահարելի խոչընդոտ մի կողմից կարտոֆիլի պահպանման համար եղած պայմանների և մյուս կողմից կարտոֆիլի գոյություն ունեցող սորտերի պատճառով: Սրա հետևանքով, ինչպես ամբողջ Միության մեջ, այնպես էլ Հայկական ՍՍՌ-ում, փորձեր սկսվեցին կարտոֆիլի ամառային ցանքը նույն դաշտավայրային շրջանի՝ գործնականում միևնույն կոլխոզի գարնան ցանքից ստացված թարմ պալարներով կատարելու ուղղությամբ: Այս փորձերը կատարել են բիոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Մ. Սանթրոսյանը, Գ. Հ. Սուրմինյանը, գոկտոր Տ. Ս. Տեր-Սահակյանը և ուրիշները շատ դժուրատնտեսների և կոլխոզների մասնակցությամբ:

Կարտոֆիլի ամառային ցանքը թարմ պալարներով նույնպես լավ արդյունքներ տվեց: Ստացվեց բարձր բերք, պալարների զերգանց որակ: Սակայն պարզվեց, որ այն տարիներում, երբ լինում են վաղ աշնանային ցրտահարություններ, համարյա թե բերք չի ստացվում: Դժվարություններ ծագեցին նաև թարմ պալարների ծլեցման կապակցությամբ: Այսպիսով, մի կողմից պարզվեց կարտոֆիլի ամառային ցանքի մեծ օգտակարությունը, ինչպես հին, այնպես էլ նոր պալարներով, մյուս կողմից էլ պարզվեց, որ այդ գործը կապված է մեծ դժվարությունների հետ: Այս վերջինիս լուծումն էլ հանդիսանում է գիտության խնդիրը, որին կարող են և պետք է վերադառնան մեր գիտնականները:

1938 թվին Հայկական ՍՍՌ պայմաններում պարզվեցին նաև բամբակենու ձերատման հարցերն ակադեմիկոս Տ. Գ. Լիսենկոյի մեթոդով: Բանն այն է, որ բամբակի բերքատվության բարձրացման այս ազդրբիոլոգիական եղանակը Հայկական ՍՍՌ համար առանձնապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում այն

պատճառով, որ այստեղ բամբակենին մշակվում է ծովի մակերևութից 900 մ բարձրության վրա:

Հայկական ՍՍՌ-ում պետք է պարզաբանվեր երկու հարց առաջինը՝ ե՞րբ կատարել ծերատումը, և երկրորդ՝ բույսի ո՞ր բարձրության վրա, ո՞ր պտղատու ճյուղի վրա: Պարզվեց (քիզ. գիտ. թեկն. Գ. Գ. Թումանյան, Ս. Ս. Խաչատրյան և Ե. Հ. Գևորգյան), որ բամբակենու ծերատումն Արարատյան դաշտավայրի պայմաններում պետք է կատարվի հուլիսի վերջին և օգոստոսի սկզբին, բույսի 11—12 պտղատու ճյուղի հանգուլցում: Այս փորձերի հիման վրա բամբակենու ծերատումը մտցվել է Ռեսպուբլիկայի ագրոկանոնների մեջ և լայն կերպով օգտագործվում է բամբակացան կոլխոզներում:

Ինչպես հայտնի է, բամբակենու ծերատման ժամանակ հետացվում է բույսի աճող ծայրը, որի հետևանքով աճող ծայրի կողմից ինտենսիվ կերպով ծախսվող սննդանյութերն ուղղվում են կոսինոնների տրամադրության տակ, որի շնորհիվ էլ զգալիորեն պակասում է նրանց թափվելը, այսինքն բարձրանում է բերքը: Այս կապակցությամբ Վ. Հ. Գուլբանյանը հարց է դրել այն մասին, թե չի՞ կարելի արդյոք բամբակենին ենթարկել ծերատման, հետացնելով բույր այն մասերը, որոնք չեն կրում իրենց վրա պտուղներ (բերք), այսինքն՝ չի՞ կարելի արդյոք ճերատել այնպես, որ փոքրանա բույսի հողից վերև գտնվող մասը, որպեսզի հնարավորին չափ շատ մեծանա բույսի պտղատու էլեմենտների սնունդը: Այս ենթադրությունները, որոնք հավանություն են գտել ակադեմիկոս Տ. Գ. Լիսենկոյի կողմից, ստուգվել են փորձնականորեն Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Բույսերի Գենետիկայի և սելեկցիայի Ինստիտուտում ու կոլխոզներում և լրիվ կերպով հաստատվել: Բամբակենու ծերատման այս եղանակը, որն անվանվել է խորը ծերատում, այժմ կիրառվում է Արարատյան դաշտավայրի կոլխոզներում:

Անհրաժեշտ է հենց այստեղ էլ նշել, որ բամբակենու ինչպես սովորական, այնպես էլ խորը ծերատումն էֆեկտ է տալիս միայն բարձր ագրոտեխնիկայի պայմաններում: Այս ազդեցիկության կան միջոցը պարտադիր է բարձր ագրոտեխնիկայի պայմաններում և այս դեպքում նա տալիս է մեծ արդյունքներ: Բամբակենու ծերատման նշանակությունն անսահման կբարձրանա այն շրջա-

նում, երբ կսկսվի երկրագործության խոտազաշտային սիստեմի լրիվ գործադրումը, երբ մեր հողերի բերրությունն անհամեմատ ավելի բարձր կլինի:

1937—1938 թվերին Հայկական ՍՍՌ-ում կատարվել է ցորենի ներսորտային խաշաձեում Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Գ. Հ. Բաբաջանյանի ղեկավարությամբ: Այդ աշխատանքը ընդգրկել է համարյա ամբողջ Ռեսպուբլիկան: Այդ աշխատանքին մասնակցել են Ռեսպուբլիկայի գրեթե բոլոր բուսաբան գիտնականներն ու գյուղատնտեսները և մի քանի հազար կոլխոզնիկներ: Դրա հետևանքով զգալի չափով թարմացվեց ցորենի սերմացուի ֆոնդը: Ինչպես ցույց տվին 1939—1940 թվականներին կատարած գիտողությունները, միջսորտային խաշաձեումից ստացված սերմերով կատարված ցանքերը ավելի բերքատու էին, քան սովորական սերմերով կատարված ցանքերը:

Պետք է նշել, որ ցորենի միջսորտային խաշաձեումը դարձել է մի շարք կոլխոզներում օգտագործվող ագրոքիոլոգիական եղանակ, սակայն տարածվել է ոչ այնքան լայն, որքան այդ ցանկալի է: Անհրաժեշտ է ամեն կերպ ուժեղացնել և տարածել միջսորտային խաշաձեման կիրառումը, ձգտելով այն բանին, որ մեր կոլխոզները, խրճիթ-լաբորատորիաները այս ագրոքիոլոգիական եղանակի կիրառումով թարմացնեն սերմացուի ֆոնդը, ասինք 3—4 տարին մեկ անգամ, կատարելով միջսորտային խաշաձեում այդ նպատակի համար ընտրված բույսերի սերմերով կատարված հատուկ ցանքերում: Ոչ մի կասկած չկա, որ այս աշխատանքը, որը ոչ մի լուրջ դժվարություն չի պարունակում, էլ ավելի մեծ չափով կարողարացնի իրեն երկրագործության խոտազաշտային սիստեմի պայմաններում:

Միջուրինյան բիոլոգիայի հատկանշական կողմերից մեկն էլ այն է, որ նա տեսական ավելի բարձր հարցերը լուծում է սոցիալիստական գյուղատնտեսության գործնական պահանջների հիման վրա: Այդ պատճառով էլ նա միշտ ակտիվորեն ներգրավվում է մեր ներկրում սոցիալիզմի կառուցման գործի մեջ և այդ բանի շնորհիվ դառնում է կենսունակ, գործոն, ակտիվ և արդյունավետ: Հայկական ՍՍՌ ագրոքիոլոգները հլել են հատկապես այս բանից և հասել են զգալի արդյունքների: Նրանք ստացել են ցորենի, եգիպտացորենի, կերաստների, պտղատուների և բանջարանոցա-

յին կուլտուրաների սորտեր, ստեղծել են խաղողի արժեքավոր քձեր, ստացել են ոչխարի նոր ցեղ: Կանգ առնենք դրանցից մի քանիսի վրա:

Հայկական ՍՍՌ-ում ստացված է ցորենի երեք սորտ: Մեր Ռեսպուբլիկան, որն ունի ցորենների բազմաթիվ արժեքավոր տեղական պոպուլացիոն սորտեր, չի ունեցել սելեկցիոն սորտ, որը դուրս բերված լիներ այդ ցորեններից: Հայկական ՍՍՌ-ում միակ շատ թե քիչ տարածված ցորենի սորտը «Ուկրաինկան» է, որը դուրս է բերված Միրոնովյան սելեկցիոն կայանի կողմից, որը սակայն մեր Ռեսպուբլիկայի պայմաններում մեծ չափերով թափում է հատիկը, խիստ կերպով, երբեմն կատաստրոֆիկ չափերով վարակվում է քարամրիկով և գորշ ու ցողունային ժանգով: Այդ պատճառով սուր պահանջ կար ցորենի տեղական սորտերից ստանալ սելեկցիոն սորտ: 1938 թվին Հայկական ՍՍՌ գիտնականները նախաձեռնեցին այդ խնդրի լուծումը: Այժմ նրանք ստացել են ցորենի «Արմյանկա», «Արտաշատի 42» և «Եղվարդի 4» սորտերը:

«Արմյանկա» սորտն ստացել է Բ. Մ. Գարասեֆերյանը, տեղական «Ալֆահատ» (ֆերուզինեում) ցորենի պոպուլացիայից, կրկնակի անհատական ընտրություն կատարելով այն ցանքերում, որ նա կատարել է Հայաստանի հարավ-արևելյան ուսյուններից ստացված ցորենի փոքրաքանակ նմուշով:

«Արմյանկա» սորտը, որը դուրս է բերված լեռնային խոնավ և կիսախոնավ շրջանների համար, չի պոռկում, համեմատաբար դիմացկուն է սնկային հիվանդությունների հանդեպ, սերմերը չեն թափվում, հատիկի որակը լավ է, հացաթխման հատկությունները բարձր, բերքատվությունը նույնպես բարձր, ինչպես այդ երևում է աղյուսակ 1-ից:

Այսպիսով աղյուսակ 1-ում բերված տվյալների հիման վրա մենք տեսնում ենք, որ «Արմյանկա»-ն համարյա չորս ցենտներ ավելի բերք է տալիս, քան «Ալթի-աղաջ»-ը և երկու անգամ ավելի բերք՝ տեղական «Գյուլգանի» սորտի համեմատությամբ:

Բանը այն է, որ «Արմյանկա» սորտը հեղինակն առաջարկել էր ցածրարժեք տեղական «Գյուլգանի» սորտին փոխարինելու համար, որի համեմատ «Արմյանկա»-ն համարյա թե երկու անգամ ավելի բերքատվություն ունի: «Արմյանկա» սորտի արտադրական փորձարկման ժամանակ հանդես եկավ մի այլ սորտ

«Արմյանկա» սորտի բերքատվությունը Ստեփանավանի և Կալինինոյի շրջաններում.

Աղյուսակ 1

Յանքի տեղը	Սորտի անունը	Բերքը մեկ հեկտարից			
		1940 թ.	1941 թ.	1947 թ.	1948 թ.
Կալինինո	«Արմյանկա»	—	—	16,0	15,6
	«Ալթի-աղաջ»	—	—	14,0	10,3
Շահնազար	«Արմյանկա»	—	—	20,5	—
	«Ալթի-աղաջ»	—	—	11,5	—
Կիբով	«Արմյանկա»	—	—	9,8	24,3
	«Ալթի-աղաջ»	—	—	9,4	19,6
Վարդարուբ	«Արմյանկա»	—	—	—	13,5
	«Ալթի-աղաջ»	—	—	—	12,5
Ուսուտ	«Արմյանկա»	21,2	23,6	—	—
	«Գյուլգանի»	13,4	12,6	—	—

«Ալթի-աղաջ», որն զգալի կերպով ավելի լավ էր քան «Գյուլգանին», բայց և այնպես նրա բերքատվությունը ավելի ցածր էր, քան «Արմյանկա»-ինը:

«Արմյանկա» սորտը նախատեսնված է Հայկական ՍՍՌ խոնավ շրջաններում՝ Ստեփանավանում և Կալինինոյում ռայոնացնելու համար, որտեղ նա այժմ գրավում է մի քանի հազար հեկտար:

Յորենի երկրորդ՝ «Արտաշատի 42» սորտը ստացել են Վ. Հ. Գուլբանյանը, Ս. Հ. Պողոսյանը և Գ. Հ. Սուրմինյանը՝ կոլխոզային ցանքերում անհատական ընտրություն կատարելու միջոցով և հետագայում կրկնակի ընտրություն կատարելով փորձնական ցանքի պայմաններում, բարձր ազդրոտեխնիկայի ֆոնի վրա: «Ար-

տաշատի 42» սորտը դուրս է բերված Արարատյան դաշտավայրի պայմանների համար: Պատկանում է փափուկ ցորեններին (ալյատեսակ՝ տուրցիկում): Ունի լավ թիակալող բույս, դիմացկուն է անկային հիվանդությունների հանդեպ: Հատկապես արժեքավոր է այս ցորենի դիմացկունությունը դեղին ժանգի նկատմամբ, որը խիստ տարածված է և վնաս է պատճառում Արարատյան դաշտավայրում: Արժեքավոր է նաև «Արտաշատի 42»-ի դիմացկունության հատկությունը խորշակի հանդեպ: Այս սորտն ունի լավորակ սպիտակ հատիկ և բարձր հացաթխման հատկություններ: Տալիս է ավելի բարձր բերք, քան ստանդարտ համադանիկումը (տեղական պոպուլացիոն սորտ, որը պետք է փոխարինվի «Արտաշատի 42»-ով): Այս հարցի վերաբերյալ տվյալները տրվում են աղյուսակ 2-ում:

«Արտաշատի 42»-ի և համադանիկում-ի բերքատվությունը
Արարատյան դաշտավայրի պայմաններում.

Աղյուսակ 2

Տարիներ	«Արտաշատի 42»	«Համադանիկում»
	Հեկտարի բերքատվ. (ցենտներ)	Հեկտարի բերքատվ. (ցենտներ)
1944	28,6	28,6
1945	38,3	37,4
1946	25,0	20,7
1947	26,0	15,3
1948	27,5	26,4
1944—1948	29,3	25,7

Աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ «Արտաշատի 42» սորտը հինգ տարվա ընթացքում 4 ցենտներով ավելի բերք է տվել համադանիկումի համեմատությամբ: Պետք է նշել, որ համադանիկումը դեղին ժանգով խիստ կերպով վարակվելու և խորշակի նկատմամբ անկայուն լինելու հետևանքով որոշ տարիներ տալիս է որակով և քանակով շատ վատ բերք:

Բոլորովին պարզ է, որ համադանիկումը պետք է փոխարին-

վի և կփոխարինվի «Արտաշատի 42» սորտով: Վերջինս այժմ բերում է մոտ 500 հեկտար տարածություն, իսկ 1950 թվի վերջում կբռնի ամբողջ Արարատյան դաշտավայրը: Անհրաժեշտ է այս ցորենը ներդնել Միության բոլոր բամբակացյան շրջաններում:

Ցորենի երրորդ սորտը՝ «Եղվարդի 4»-ը, ստացել են Ա. Ա. Մկրտչյանը և Ա. Հ. Նդիկյանը, 1938 թվին կատարված ներսորտային խաչաձևման ժամանակ հայտնաբերված հիբրիդներից: Հետեվապես, այս սորտը ստացված է ազատ փոշոտման միջոցով, ամենայն հավանականությամբ ծագելափոշիների խառնուրդով, թերևս տարբեր այլատեսակների և տեսակների, որոնք հանդիպում են պոպուլյացիաներում, որտեղ կատարվել է ներսորտային խաչաձևում: Հնարավոր է, որ այդ ժամանակ տեղի է ունեցել և մենտորի երևույթը, որը և, հավանաբար, պայմանավորում է այդ սորտի բարձր հատկությունները:

«Եղվարդի 4»-ը դուրս է բերված Հայաստանի չոր, նախալեռնային շրջանների համար, արտաքին նշաններով համապատասխանում է գրեկումին, ունի հիանալի սպիտակ հատիկ, դեղին ժանգով վարակվում է միջին չափով, ասիական վարակումը տեղի է ունենում բույսերի զարգացման վերջին ֆազում և այդ պատճառով համարյա վնաս չի պատճառում: Այս ցորենը երաշտադիմացիուն է, չի պտուկում, չնայած որ ունի նուրբ ցողուն: Ունի բարձր հացաթխման հատկություններ: «Եղվարդի 4»-ը աչքի է բնկնում բարձր բերքատվությամբ, ինչպես այդ երևում է աղյուսակ 3-ից:

«Եղվարդի 4» և գրեկումի բերքատվությունը Հայկական ՍՍՌ չոր նախալեռնային գոտու պայմաններում.

Աղյուսակ 3

Տարիներ	«Եղվարդի 4»	«Գրեկում»
	Բերքը հեկտարից (ցենտներ)	Բերքը հեկտարից (ցենտներ)
1946	42,2	35,1
1947	31,0	22,9
1948	36,7	28,9
1946—1948	36,6	29,3

Աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ «Նդվարդի 4»-ը 7—8 ցենտներ ավելի բերք է տալիս, քան ստանդարտը՝ դրեկումբը: Այս սորան ուժեղ տեմպերով պետք է բաղմացվի և տարածվի Միուսթյան բոլոր շոր և կիսաշոր կլիմայական պայմաններ ունեցող շրջաններում:

Ինչպես արդեն ասվել է վերը, ցորենի այս սորտերը— «Արմյանկա», «Արտաշատի 42» և «Նդվարդի 4» ստացված են տարբեր եղանակներով: Լավագույն արդյունք է տվել «Նդվարդի 4» սորտի ստացման եղանակը: Պարզ է, որ ընտրողականությունը և դաստիարակումը պետք է տալին և ավել են ավելի պակաս արդյունքներ, քան ազատ ընտրողական խաչաձևումը, ընտրությունը հիբրիդների մեջ և նրանց դաստիարակումը:

Ագրոբիոլոգների ստացած ցորենի սորտերը որոշ չափով լրացնում են Ռեսպուբլիկայի դաշտավայրի, նախալեռնային և լեռնային գոտիների սորտերի պահանջը: Սակայն սա բավարար չէ, որովհետև Հայկական ՍՍՌ տեղիտորիայի հողակլիմայական պայմանների բաղմազանությունը պահանջում է ավելի շատ քանակությամբ սորտեր: Բացի դրանից, այս սորտերի փոխարեն պետք է ստացվեն նոր, ավելի բերքատու սորտեր: Պետք է նշվի և այն, որ դեռ բոլորովին վճռված չէ գարնանացան ցորենների հարցը: Այս հարցերի լուծումը հանդիսանում է Հայկական ՍՍՌ ագրոբիոլոգների անհետաձգելի խնդիրը:

Անհրաժեշտ է միշտ հիշել, որ երկրագործության խոտադաշտային ցանքաշրջանառության սխտեմը, դաշտապաշտպան անտառագոտիները, կհանգեցնեն հողի շտեմնված բերրիության: Մեր հողագետները, ագրոբիմիկոսները, միկրոբիոլոգները, ագրոտեխնիկներն իրենց ստեղծագործական աշխատանքով ավելի ևս կբարձրացնեն այդ բերրիությունը: Այն ժամանակ Միշուրիսի—Լիսենկոյի տեսությամբ աշխատող գենետիկ-սելեկցիոներների համար կբացվեն նոր, անընդգրկելի հորիզոններ: Այն ժամանակ կբարձրանա նոր ստացված և ստացվող սորտերի բերքատվությունը մի կողմից, և մյուս կողմից անհրաժեշտություն կծագի ստեղծել այնպիսի սորտեր, որոնք ի վիճակի լինեն իրացնելու նորագված հողի լիառատ սննդանյութերը: Հնարավոր է, որ այդ բույսերից մեկը լինի ճյուղավորված ցորենը, կամ նրանից ստացված նոր սորտը և կամ կստեղծվեն նոր ճյուղավոր հասկանի ցորեններ՝

A 17929



սովորական ցորեններից, որը լիառատ սննդի պայմաններում լրիվ հնարավոր և լուծելի հարց է:

Վերն արդեն ասվել է եգիպտացորենի նոր արժեքավոր դերը ստանալու մասին՝ խիստ անսովոր ժամկետներում ցանկելու պայմաններում: Եգիպտացորենը Հայկական ՍՍՌ-ում մշակվում է խիստ սահմանափակ շափերով: Դրա գլխավոր պատճառներից մեկը հանդիսանում է այն, որ Ռեսպուբլիկայում տեղական պայմաններին քիչ թե շատ համապատասխան սորտ չկա: Այդպիսի սորտի ստացումն է հանդիսանում Մ. Գ. Թումանյանի խնդրը, որն ստացել է կարծր եգիպտացորենի արժեքավոր գիծ, որն այժմ փորձարկվում է Արարատյան դաշտավայրի 28 կոլխոզներում:

Բացի դրանից, բնտրության և դաստիարակման ճանապարհով ստացված է շաքարի եգիպտացորենի արժեքավոր գիծ: Այդ գիծը ներկայումս բազմացվում է՝ կոլխոզներում լայնորեն ներդնելու համար: Հարկավոր է հատկապես նշել, որ շաքարի եգիպտացորենը լավ արդյունքներ է տվել չիմաններում մշակվելու պայմաններում: Իսկ չիմանների գյուղատնտեսական իրացումն ունի հրաշայական նշանակություն և հնարավոր է, որ եգիպտացորենն այդ գործում դրական դեր կկատարի:

Հայկական ՍՍՌ միջուրինականների-լիսենկոյականների կողմից ներկայումս ստացված է խաղողի (Ս. Հ. Պողոսյան), պտղատունների (Ս. Լ. Ազուլյան, Պ. Գ. Գարանյան), բանջարանոցային կուլտուրաների (Ս. Ս. Խաչատրյան, Հ. Գ. Բատիկյան), կերաբույսերի (Ա. Ա. Մաթևոսյան) արժեքավոր գծեր, որոնք բազմացվում են և ներգրվում սոցիալիստական գյուղատնտեսական արտադրության մեջ:

Կատարվել են հետաքրքիր հետազոտություններ նաև կենդանիների գենետիկայի և սելեկցիայի վերաբերյալ, հատկապես ոչխարի գենետիկայի և սելեկցիայի:

Անասնապահության բնագավառում ծառայած են եղել և ծառայած են ներկայումս կարևոր խնդիրներ անասունների որակի լավացման, նրանց մթերատվության բարձրացման վերաբերյալ: Այդ նպատակով լայն կերպով օգտագործելով տեղական անասունների մետոդագիան, արդեն ստեղծված են և կստեղծվեն նոր, բարձր մթերատվություն ունեցող գյուղատնտեսական անասունների

ցեղեր, հարմար Հայկական ՄՍՌ տարրեր դոտինների և շրջանների պայմաններին:

Մեր Ռեսպուբլիկայի համար այդ տեսակետից մեծ հետաքրքրություն է ներկայացնում լեռնային խոշոր եղջյուրավոր անասունների և նուրբ բուրդ ու ճարպավոր պոչ ունեցող կաթնատու ոչխարների ստեղծումը:

Մեր անասնապահներն իրենց աշխատանքներում ելնում են գործնականում իրեն արդարացրած այն զրույթից, որ բարձր կենսունակության և մթերատվության ստացումը հնարավոր է միմիայն տեղական մատղաշի զարգացման նախնական շրջանում՝ նրանց համապատասխան դաստիարակման և լիառատ կերակրման միջոցով: Մեր անասնապահները կիրառելով Ի. Վ. Միշուրինի, Տ. Գ. Լիսենկոյի և Ի. Ֆ. Իվանովի տեսությունը, իրենց ուսումնասիրություններում ելնում են այն բանից, որ նոր բարձր մթերատվություն ունեցող ցեղեր ստեղծելու ժամանակ մայրական օրգանիզմն ունի զերակշռող դեր, և ելնելով դրանից, նրանք ամենամեծ ուշադրությամբ են վերաբերում ծնողական զույգերի ընտրությանը, առաջին հերթին հաշվի առնելով նրանց տնտեսական օգտակար հատկությունները:

Լայն վերարտադրությունն ապահովելու, կենսունակությունն ուժեղացնելու, ամուլության դեմ պայքարելու և պտղաբերությունը բարձրացնելու համար մեր անասնապահները ղեկավարվում են Ի. Վ. Միշուրինի և Տ. Գ. Լիսենկոյի ցուցումներով բնության տարրեր պայմանների թարմացնող նշանակություն ունենալու մասին՝ ծնողական զույգերի դաստիարակման գործում, սպերմայի ընտրողականության մասին՝ միջցեղային և միջդեմային զուգավորման դեպքում, կրկնակի զուգավորման նշանակության մասին, սեռական մենտորի հիման վրա՝ ցեղի պտղաբերությունը բարձրացնելու համար, ծնողական զույգերի հասակի ազդեցության մասին՝ սերընդի հատկության վրա:

Ի. Վ. Միշուրինի, Տ. Գ. Լիսենկոյի, Ի. Ֆ. Իվանովի ուսմունքի հիման վրա զուղատնտեսական գիտությունների դոկտոր Ա. Ա. Ռուսկոյանը տեղական ոչխարի ցեղի և մետիսի խաչաձևման ճանապարհով ստացել է կիսանուրբ բուրդ և ճարպավոր պոչ ունեցող ոչխարի նոր ցեղ: Այդ աշխատանքի մեջ լայն կերպով կիրառված է հիբրիդների ստեղծագործական ընտրությունը և մատղաշի դաս-

տիարակումը: Մրա շնորհիվ ստացվել է ոչխարի նոր, արժեքավոր ցեղ, լավ խուզվածքով (միջինը 3 կգ), մայրերի բարձր կշռով (միջինը 56 կգ), խոչերի բարձր կշռով (միջինը 80 կգ), բարձր կաթնատվությամբ (միջինը 85 կգ լակտացիոն շրջանում) և ավելի մեծ դիմացկունությամբ, որն անհրաժեշտ է շրջագառող ոչխարաբուծության համար:

Մրանք են, համառոտակի, ազրոբիոլոգիական դիտության հաջողությունները Հայկական ՍՍՌ-ում: Ռուսական մեծ գիտությունը, նրա լավագույն ներկայացուցիչներ Ի. Մ. Սեչենովը, Վ. Օ. Կովալևսկին, Կ. Ա. Տիմիրյազևը, Ի. Պ. Պավլովը, Վ. Ռ. Վելյամսը, Վ. Վ. Դոկուչանը, Պ. Ա. Կոստիչևը, Ի. Վ. Միչուրինը և մեր օրերում Տ. Դ. Լիսենկոն ձգտում էին գիտությունը դարձնել ժողովրդի սեփականություն և աղբյուր՝ ժողովրդի բարեկեցությունն անընդհատ բարձրացնելու համար: Այդպես է սովորեցրել մեծագույն առաջնորդ Վ. Ի. Լենինը, այդ է սովորեցրել և սովորեցնում հանձարեղ առաջնորդ և ուսուցիչ Ի. Վ. Ստալինը: Այսպիսին է սովետական գիտության ճանապարհը: Այս ճանապարհով են զնացել և կզնան Հայկական ՍՍՌ ազրոբիոլոգները:



Պատ. խմբագիր Գ. Հ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

Տեխ. խմբագիր Մ. Կ ա փ լ ա ճ յ ա ճ

Մրագրիչ Ս. Շ ա Կ ք ա զ յ ա ճ

Հանձնված է արտադրության 12/III 1949 թ., ստորագրված է տպագրության 1/IV 1949 թ., վճ 01512, պատվեր 176, հրատ. № 616, տիրաժ 3200, տպ. 1¹/₄ մամ., մեկ մամ. 36,480 տպ. նիշ:

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Արուսյան 104

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008889

ԳԻՆԸ 1 Ռ.

A¹¹17929